



# ԲԱԶՄԱՎԵՊ

ՃԶ ՏԱՐԻ . ԹԻՒ 3 .

1858

ՄԱՐՏ 1 .

## ԲԱՐՈՅԱԿԱՆՔ

Ճենաց խելացի առածեներ : (Ցես երես 33)

Հարուստես, և բոլոր խելքդ միտքդ  
հարստութիւններդ շատցընելու վրայ  
է : Իւայց որո՞ւն համար . որդւո՞ցդ հա-  
մար : Դիմուաս որ թերևս ասովլիրենց  
կորուստը կը պատրաստես : Շուաքինի  
մարդուն համար ձոխութիւնները աւե-  
լինեղութիւն տուող են քան թէ օգ-  
տակար, որովշետե իր ուշադրութիւ-  
նը կը զրաւէն . բայց անսառաքինի մար-  
դը հարստութիւններով նոր միջոցներ  
կը գտնայ իր մոլութիւնները պարարե-  
լու :

Կ'ամբաստաննեն զիս իբրև թէ գէշ  
դիտմունք մը ունեցած ըլլամ . — ինչ  
փոյթս է իմին, երբ իրօք չունիմ ես  
նոյն դիտմունքը : Կ'ամբաստաննեն զիս  
իբրև թէ պախարակելի գործողութիւն  
մը ըլլած ըլլամ . — ինչու վշտանամ ա-  
սոր վրայ, երբոր ես անմեղ եմ : Ուրիշ-  
ներու կարծիքը կրնայ զիս իմ առաքի-  
նութենէս մերկացընել :

Երկարատե յաջողութիւնը կը ծնա-  
նի զանհոգութիւն ու զգուռողութիւն :  
Հպատակք թագաւորին զէնքերն  
են : Ծակ որ հպատակները պակսին ,  
իրեն ինչ բանի կը ծառայեն ամենա-  
հարուստ զինարանները :

Կ'ուաստ վիճակէ մը բարձր աստի-  
ճաններու անցնիս նէ , մի մոռնար ըն-  
դունած բարերարութիւններդ , և մի  
յիշեր կրած նախատինքներդ :

Իան մը կայ որ պէտք է վախցընել  
տայ ամեննէն աւելի զօրաւոր թագաւո-  
րը . այս ինքն հպատակաց նայուածքը ,  
զոր ամենքը իրեն վրայ միայն դարձու-  
ցած են :

Ուսագաւորը սիրտ մը միայն ունի , և  
աս սրտին վրայ հազարաւոր թշնամի-  
ներ մէկէն կը թափին . ումանք կը ջա-  
նան յարձակիլ անոր վրայ պատերազմի  
փառաց հրապուրանօքը , այլք հաճոյից  
հեշտութեամելը . կէպք շողոքորթու-

թիւն կը բանեցընեն անոր դէմ, ուրիշներն ալ նենգաւոր և խաբէական պատճառաբանութիւններ, խորամանկութիւն և ստախօսութիւն. այնչափ թըշնամի ունի, որչափ որ պատիւներու ու բաղզի հետամուտ մարդիկ կան: Դըքքաղզ թագաւորք. թէ որ վայրկեան մը ինքինքնիդ չպաշտպանէք, թէ որ վայրկեան մը քաղզը քնոյ ձեռքը թողուք ինքինքնիդ, ինչպէս կարելի է որ չյաղթուիք դուք:

Դզէկ գիրք մը, աղէկ խօսակցութիւն մը օգուտ կրնան ընել. բայց աղէկ օրինակ մը շատ աւելի աղզու կերպով կը խօսի մարդուս սրտին:

Դրաջին անգամ աղէկ գիրք մը կը կարդամ. և ան համութիւնը կը զգամի իբրև թէ նոր բարեկամ մը ստացած ըլլայի: Արկին անգամ կը կարդամ գիրք մը որ արդէն կարդացեր եմ. հին բարեկամ մըն է անիկայ զոր նորէն կը տեսնեմ:

Ո՞արդուս կարողութիւնը շատ շափաւոր է, և համբաւոյ կողմանէ ունեցած յաջողութիւնները շատ թեթև են: Ոչ երբէք կրնայ ամենուն գովետը ընդունիլ, ոչ երբէք կրնայ պահարակողներուն ձայնը լռեցընել, ոչ երբէք կրնայ ինք իր անձին տուած պարսաւանքներէն ազատ մնալ: Քիչ պակսութիւն ըրէ, կ'ըսէին իմաստնագոյնքնի հնոց:

Կշանաւոր մարդ մը ինծի այցելութեան որ գալու ըլլայ, կը սկսիմ պարծենալ. ինչո՞ւ. արդեօք մաս մը կը մնայ իմ քովս իր պատիւներէն, մեծութենէն ու հարստութիւններէն: Իսկ թէ որ ես հարուստ եմ, կ'ամընամերը որ հասարակ մարդ մը ինծի այցելութեան գալու ըլլայ նէ: Ծո ալ ուրիշ ծաղրական գործողութիւն: Ավ վերցընէ արդեօք այս մարդը մաս մը իմ բարօրութենէս. իր թշուառութենէն մաս մը կը թողու ինծի:

Ոպասեմ որ աւելորդ ստակ ունենամ, և ան ատեն աղքատաց կ'օգնեմ: Եղկելի դու, ոչ երբէք պիտի օգնես անոնց:

Ո՞արդուս ամենէն վտանգաւոր սուրը՝ իր արծաթսիրութիւնն է. ամենէն զօրաւոր վահանը՝ իր անշահասիրութիւնն է:

Քու հեծածդդ էշ մըն է. կը տեսնես որ գիմացէդ մարդ մը կ'երթայ՝ աղէկ ձիու մը վրայ հեծած. կը տրտմիս ու կը գանգատիս աս բանիս վրայ: Դարձուր գլուխոդ, տես սա բազմութիւնն որ ոտքով ետևէդ կու գայ՝ բեռներուտակ հեծելով, և միիթարէ ինքինքդ:

Փղոսկրին համար է որ կ'որսան զիիզը. կը բանան ոստրէն, կը մեոցընէն զանիկայ, որպէս զի մարդարիտ հանեն անկէց. թութակին խօսելույարմարութիւնն է պատճառ իր ազատութիւնը կորանցընելուն. այսպէս մարդուս ալ կորուստը շատ անգամիր այն կատարելութիւններէն է, որմնցմնվ որ կը պարծի:

Նօր պարտքն է իր որդւոց պակսութիւններն ուղղելը. մայրը կը հակամիտի զանոնք արդարացընելու: Հայրը պէտք է որ ուղղէ զանոնք, բայց առանց սաստիկ խստութեան. մայրը պէտք է որ կարեկից ըլլայ անոնց տկարութեանը, բայց առանց սաստիկ ներողամտութեան:

Ո՞ամընաս գինովութեան ատեն ըրածներուդ ու մոտածածներուդ վրայ. կրից գինովութիւնը անկէց պակաս վըտանգաւոր չէ:

Կարող եմես ամենեին առիթ չտալու չարախօսութեան, բայց ոչ եթէ արգիլելու չարախօսները որ չխօսին: Ծանց գէշ գիտաւորութեան մ'որ գիշերը քալելու ըլլամ, կրնամմ արգիլել շուները որ չհաջեն վրաս:

Ո՞ուզես որ քու համբաւդ ամենէն զուտ ոսկւոյն պէս փայլի. վիշտերու կրակովը միայն կրնաս այս պայծառութեան համնիլ:

Արեան տաքութենէն մեքենական ու անկանոն քաջասրտութիւն մը կը ծնանի: Օ ձմարիտ քաջութիւնը բանականութիւնը կը կառավարէ:

